Արձանագրություն N 4
ՀՀ առողջապահության նախարարության 2018 թվականի կարիքների համար անհրաժեշտ հրատապ բաց մրցույթով դյուրակիր համակարգիչների ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/34/1» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «27» «Հուլիսի» 2018թ.
ժամը 10:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Մ. Մխիթարյան
Հանձնաժողովի անդամներ Հ.Հարությունյան
Ա.Մուրադյան

Հանձնաժողովի քարտուղար Հ.Մնացականյան

1. Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնելու մասին

(Մ.Մխիթարյան)

Առաջնորդվելով, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով հարցում է ներկայացվել ՀՀ ԿԱ ՊԵԿ:

Հարցման պատասխանը ստացվել է 23.07.18թ.

Որոշվեց «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին

(Մ.Մխիթարյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ որոշվել էր առաջարկել «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ին որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Կազմակերպության կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացվել է 25.07.18թ.:

Որոշվեց «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ի «Մասնագիտական փորձառության» որակավորման չափանիշը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ընթացակարգի ամփոփման մասին

(Մ.Մխիթարյան)

Հիմք ընդունելով մասնակցի կողմից ներկայացված հայտը և «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությունը.

✓ Որոշվեց «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/34/1» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել և հաղթող ճանաչել՝ «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ին՝ 356.103.000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

✓ Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մաս, որոշվեց «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/34/1» ծածկագրով գնման ընթացակարգի անգործության ժամկետ սահմանել 2018 թվականի հուլիսի 28-ից մինչև 2018 թվականի օգոստոսի 6-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Մ. Մխիթարյան

Անդամներ՝ ---------- Հ. Հարությունյան

---------- Ա. Մուրադյան

Քարտուղար՝ ---------- Հ. Մնացականյան